

Բ Ե Ջ Մ Ե Ս Ե Պ

Օ Ր Ա Գ Ի Ր

ԲՆԱԿԱՆ, ՏՆՏԵՍԵԱԿԱՆ ԵՒ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳԻՏԵԼԱԵՆՑ

Բ. ՏԱՐԻ, ԹԻԻ 16.

1844

ՕԳՈՍՏՈՍԻ 15.

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԲՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ

() Դապարիկ : { } Գրաւած Ա :

Ընթերցող տարուան Նազմաւիպին մէջ համառօտ տեղեկուի մը տուինք օգապարիկին վրայ, աւելի պատմական մասը յիշելով՝ հիմա հոս քիչ մը աւելի տեղն'ի տեղը բացատրենք. ճամբորդներուն մէջէն ալ զանոնք միայն յիշենք՝ որ մասնաւոր կատարելագործութիւն մը տուին աս գիւտիս:

Հիմակուան Ժամանակիս մեծաւոր փորձերուն մէջ որ մարդիկ ըրին՝ ամենէն զարմանալին օգապարիկներուն փորձն է, որով մարդիկ օգուն վերերը անվախ ելլելով՝ սկսան ճամբորդութիւններ ընել այնպիսի տեղուանք, ուր որ առաջուց բոլորովին դատարկութիւն կը կարծուէր:

1783^{ին} յունիսի 5^{ին} Սոնկոլֆիէն թռուց իր օգապարիկ գունտը Նոնոնէ քաղքին մէջ անթիւ բազմութե առջև: Վունտին ծանրութիւնն էր 500 լիպրէ, և մէջը 22,000 խորանարդ ոսնաչափ օգ կրնար առնել. գունտը կտաւէ շինած, ու վրան ալ թղթով պատած էր. գունտին տակի կողմէն խոշոր ծակ մը բացած էր, ան

ծակին տակէն ալ յարդ ու բուրդ վառելով, անգայտացած օդը գունտին մէջ կը մղէր. որով գունտը շուտով մը ուռեցաւ. և երբոր Նոմիւրի ջերմաչափով 70 աստիճանի տաքութիւն ունեցաւ՝ այնպէս թեթեւացաւ որ թող տալուն պէս սկսաւ վեր ելլել:

Ուրիշ բնագէտներ երբոր տեսան աս փորձին յաջողիլը, իրենք ալ ուզեցին նոյն բանը փորձել: Կարողոս կամ Եարլ անունով մէկը մտածեց որ օգէն աւելի թեթեւ կազով մը լեցնէ գունտը. ուստի նախ ամենաթեթեւ գունտ մը շինեց, ու լեցուց անիկայ ջրածխի կազով (որ դիւրաւ օդ ալ կ'ըսուի). աս կազը տասնհինգ անգամ աւելի թեթեւ է մեր բոլորտիքի գինի ծանրութենէն: Վունտը շինած էր բարակ կերպասէ՝. և որպէս զի խոնաւութիւն չառնէ, և կազը ծակտիք գտնելով մէջէն չփախչի, կերպասը բլեկնի ոգիքի և տաք ցրնդական եղի մէջ լուծած առաձգական խէժով օծեր էր: Վունտին տրաւ

մագիծը 12 ոտնաչափ էր, և մէջը 943 խորանարդ ոտնաչափ կազ կրնար առնել. աս պատրաստութեամբ Մ. րեսի հրապարակէն գունտը ճամբայ ելաւ անթիւ բազմութեան առջև :


Մոնկոլֆիէն Մ. Երսայլ քաղաքը նոր գունտ մը շինել տուաւ 57 ոտք բարձրութեւ, 41 ոտք տրամագծով, որ 37,000 խորանարդ ոտնաչափ օդ կրնար առնել. գունտը հաստ կտաւէ շինած էր, վրան ալ թղթով պատած . 1783^{ին} սեպտեմբերի 19^{ին} 150,000 հանդիսականաց առջև ան ահագին կտաւը աներևոյթ զօրութեամբ մը ուռեցաւ, և խոշոր գունտ մը դառնալով ինքնիրեն սկսաւ վեր ելլել, ու ինչուան 300 գրկաչափ բարձրացաւ . ժողովուրդն որ առաջ բերանաբաց գունտին մեծութեանը վրայ կը զարմանար, անկէ ետեւ աչուրները տընկած՝ անոր երթալով պզտիկնալուն վրայ կը հիանար . մանաւանդ երբոր լսեց որ ան ահեղ տեսարանին պատճառը 50 լիպրէ յարդ ու 5 լիպրէ բուրդ է :

Ինագէտները աս յաջողութիւններս տեսնելով սկսան աւելի ուրախանալ. վասն զի աս գիւտին ծաղկելովը աւելի պիտի լուսաւորուէր իրենց գիտութիւնը, և մթնոլորտին վերերը նորնոր փորձեր ընել կը յուսային : Իայց ինչուան ան ատեն պարզ գունտը կը թռցնէին . ուստի մտքերնին դրին որ իրենք ալ գունտին հետ մէկ տեղ վեր ելլեն :

Մ. պատճառաւ Մոնկոլֆիէն ուրիշ նոր գունտ մըն ալ շինեց առջի կերպով. գունտին բարձրութիւնը 70 ոտք էր, տրամագիծը 45 . մէջն ալ 60,000 խորանարդ ոտնաչափ օդ կ'առնէր . գունտին տակէն չուաններով կախուած՝ նաւակի ձևով ուռենիէ մեծ սապատ մը կար . գունտին վարի կողմն ալ բաց էր, և ան ծակին դիմացը շղթաներով վառարան մը կախած էր, որպէս զի տաքութեամբ ան գայտացած օդը գունտին մէջը լեցուի . նաւակին այլևայլ ծայրերէն ալ

խիստ երկայն չուաններ կապած էին, որոնց ծայրը ինչուան գետին կը հասնէր . աս չուանները անոր համար էին, որ գունտը խիստ չափազանց բարձրանայ նէ՝ վար քաշեն : Մ. պատրաստութիւններէն ետքը Փիլաթր տէ Սոգիէ ու տ' Մըլանտ նստան նաւակին մէջ, կրակը արծարծելով՝ գունտին մէջի օդը աղէկ մը անգայտացուցին, և երկու իրեք անգամ ելան իջան ինչուան 2 կամ 300 ոտք բարձրութիւն . բոլոր ծանրութիւնը 1600 լիպրէ էր : Իայց մարդուս բնութիւնը անյագ ըլլալուն, նոյն բնաբանները մտքերնին դրին որ աւելի յանդուգն փորձ մը ընեն . այսինքն արձակ գունտով վեր ելլեն՝ առանց ինչուան գետին չուաններ ձգելու . ուստի 1783^{ին} նոյեմբերի 21^{ին} Պոլլոնէի անտառէն ելան ու բարձրացան ինչուան 500 գրկաչափ, և Փարիզի վրայէն անցնելով 17 վայրկեանի մէջ իրենց ելած տեղէն 2 փարսախէն աւելի հեռու իջան :

Ինչպէտ և աս փորձն ալ աղէկ յաջողեցաւ, բայց ամենուն սիրտը դողի մէջ էր՝ շատ մեծամեծ վնասներու վտանգ ըլլալուն համար . վասն զի գունտին մէջի օդը միշտ անգայտացած պահելու համար ճամբորդները հետերնին կրակ և յարդ ու բուրդ կ'առնէին, ու կամաց կամաց կը վառէին . իսկ թէ որ յանկարծ բոցէն ան վառելու նիւթերը կամ գունտը բռնկէին, բոլոր մեքենան կը բորբոքէր, ու տներու և մարագներու վրէժնալով կրնար հրդեհ պատճառել . ճամբորդներն ալ վար գահավիժելով կը մեռնէին : Մէյմըն ալ որ ճամբորդները անգաղար կրակը վառ պահելու զբաղելով չէին կրնար հանգիստ սրտով իրենց զննութիւններն ընել : Ետ անգամ ալ հետերնին առած վառելիքներուն ծանրութեամբ, և գունտին մէջի օդը աղէկ չանգայտանալով, մթնոլորտին հետ գրեթէ հաւասարակշիռ կ'ըլլային . ուստի չէին կրնար շատ բարձրերը ելլել : Մ. դժուար



() Դասարեի :

բուժիւնները ամենուն աչքը բացին ,
և իմացուեցաւ թէ որչափ աւելի օգ-
տակար է Վարդուսին հնարած գիւ-
տը , այսինքն ջրածին կազ գործածե-
լը . վասն զի անիկայ օդէն շատ աւելի
թեթեւ է , գիւրաւ ալ կը շինուի , ա-
մենեւին կրակ պէտք չէ , և մարդ ուզած
ատենը կրնայ գունտին մէջէն ուզա-
ծին չափ պարպել . աս սքանչելի գիւ-
տը Վարդուսին անունն ալ Սոնկու-
ֆիէի անուանը չափ անմահացուց :

Սոյն տարուան մէջ դեկտեմբերի
1ին Վարդուս ու Սոպեր (Ժփւլլի
պարտէզէն ելան խեղճոտ կերպասէ շի-
նած արձակ գնտով՝ որ լեցուն էր ջրա-
ծին կազով . գունտէն չուաններով կա-
խուած նաւակին մէջ գրերէին շատ մը
նաւախիճ . ճամբայ ելլելէն առաջ
պզտիկ օդապարիկ գունտ մը խրկե-
ցին , որպէս զի հովին սաստկութիւնն

ու ընթացքը իմանան : Ինկէ ետեւ ի-
րենք ալ նստան մեծ օդապարիկի նա-
ւակին մէջ ու սկսան վեր ելլել . բար-
ձրացան ամպերէն վեր , և երկու ժա-
մուան մէջ ինը փարսախ տեղ գնա-
ցին : Յետոյ գունտին մէջի կազը քիչ
մը դուրս թողուցած ըլլալուն հա-
մար , երբոր տեսան որ երկուքը մէ-
կէն չկրնար վերցընել , վար իջան , ու
Սոպերը դուրս ելաւ . գունտը թե-
թեւնալով նորէն վեր ելաւ , և Վարու-
սը ինչուան 1524 գրկաչափ բար-
ձրացընելէն ետեւ՝ 36 վայրկենէն վար
իջաւ , ճամբայ ելած տեղէն իրեք մղո-
նի չափ հեռու :

Իս յաջող փորձովս Վարդուսի գիւ-
տին աղէկութիւնները յայտնի եղան .
մոնկոլֆեան գունտերուն տեղ սկը-
սան ամէն տեղ ջրածին կազի գնտեր
գործածել , և խոհեմութեամբ եղած

փորձերը միշտ յաջող գնացին. քաղաքական հանդէսներու և հասարակաց ուրախութեանց զուարճութիւններէն մէկն ալ օդապարիկը սեպուեցաւ:

Հիմա հոս դենք օդապարիկով եղած երևելի ճամբորդութիւնները.

Ա. Փիլաթը տէ Ռոզիէ. ասիկայ ուզելով Ռոնկոլֆիէին ու Վարուսին գիւտը մէկտեղ բաղադրել, երկու գունտ շինեց. վերինին մէջ լեցուց ջրածին կազ, իսկ վարինին մէջ տաքութեամբ անգայտացած օդ կը մղէր կրակով. աս իրեն շինած մեքենան բռնկելով, ինքնալան հուն բարձրութենէ վար գահավիժելով՝ ընկաւ մեռաւ:

Բ. Նամպէքքարի անունով իտալացին նոր տեսակ գունտ մը հնարելով, ուզեց մեքենան կառավարել. առջինին պէս դժբաղդութեամբ ընկաւ մեռաւ:

Գ. Պլանշար գաղղիացին Տուվրէն ելաւ, և Լէզզիայի ու Վաղղիայի մէջ տեղի ծովը անցնելով՝ իջաւ Վալէի ծովեզերքը. հոն բուրգ մը կանգնեցին իրեն յիշատակ:

Դ. Վոյն Պլանշարին կինը իր ճամբորդութեան ատենը ուզելով զուարճութեան համար պզտի հրախաղ մը ձևացնել, օդապարիկ գունտը բռնկեցաւ, ինքն ալ վար գահավիժելով, ու տան մը երդիքին զարնուելով ջախջախեցաւ:

Ե. Վարնըրէն, որ հազիւ 100 գրուկաչափ տեղ բարձրացած էր՝ մեծ յանդգնութեամբ ու անխոհեմութեամբ իր գունտը կտրեց, և միայն անկարգելին՝ ապաւինած՝ անհասարին արագութեամբ վար հասաւ՝ առանց փնտրուելու:

Ուրիշ ճամբորդներէն մէկ քանին ալ յիշուած են Ռազմավիպի առջի տարւոյն մէջ. ասոնց մէկն է նաև Վրին անգղիացին, որուն ճամբորդութիւններուն պատմութիւնը երրորդ յօդուածին մէջ կը դնենք:

Եւ տարի յուլիսի 8^{էն} մեծ զուարճութիւն պատճառեց մեր թագաւորին, և Վոստանդնուպօլսոյ գլխաւոր մեծամեծներուն և բոլոր ժողովրդեան նաև Վոմասքի անունով Պոլոնիացին, որ Վսկիւտարի քով Հայտար փաշա ըսուած տեղէն պզտիկ օդապարիկ մը թռցնելէն ետեւ, ինքն ալ մեծ օդապարիկովը վերելաւ բարձրացաւ, ու մէկ ժամէն աւելի օդուն մէջ ճամբայ ընելէն ետեւ՝ իջաւ Լալովային կողմերը: Վոյն ամսոյն 28^{էն} ալ () ռլանտի անունով ուրիշ Պոլոնիացի մըն ալ Պատուաքաղքին բնակիչներուն աս զուարճութիւն տուաւ. ու ինչուան դրեթէ 15,000 ոսնաչափ բարձրանալէն ետեւ, Պատուայէն երկու ժամ հեռու Լպանոյ ըսուած ջերմուկներուն քովերը իջաւ:

() օդապարիկը հասարակաց ուրախութեանց ժամանակէն զատ՝ մարդիկ սկսան գործածել նաև հասարակաց նորմութեան ատեն. շատ օդապարիկներ շինուեցան պատերազմի ժամանակ գործածելու համար, թշնամիներուն զօրութիւնը և պաշարուած քաղաքներուն կարօտութիւնը իմանալու համար. աս տեսակ օդապարիկներ գործածողին առջինը եղաւ յուր տան զօրավարը Ֆլէօրիւի պատերազմին մէջ 1794^{էն} յուլիսի 26^{էն}:

Ինչուան ան ատեն դեռ բնախօսներուն մասնաւոր օգուտ մը չէր եղած աս գիւտովս. Վէիլլուսաք և Պիոյ բնագէտները մտքերնին դրին որ օդային ճամբորդութիւն մը ընեն՝ ելեքորականութեան, մագնիսականութեան և մթնոլորտին վերի կողմերուն վրայ դիտողութիւններ ընելու համար: Վէիլլուսաքին երկրորդ ճամբորդութիւնը աւելի հրաշալի եղաւ. ինչուան 7000 մետր տեղ բարձրացաւ, ուր որ ինչուան հիմա ոչ ոք հասած է:

Եւ առջի յօդուածին մէջ ընդհանուր տեղեկութիւնները դնելէն ետեւ՝ երկրորդ յօդուածին մէջ ալ կը

1 Գ. շ. Parachute.

դնենք օդապարիկ շինելու վրայ քանի մը տեղեկութիւններ. իսկ երրորդ յօդուածով կը յիշենք օդապարիկը կառավարելու համար գտնուած գըլխաւոր կերպերն ու հնարքները:

ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Պանիան ծառը:

ՆԱԽԵՐՈՒՆ մէջ զարմանալի յատկութիւններ ունեցողներէն մէկը պանիան ըստուած ծառն է, որ հնդկաստան կը բուսնի. անոր համար իննէոս հնդկաստանի Ռիշի գրեր է անունը: Ըսիկայ հնդկաստանցիք կը պաշտեն: Ընդհանուրութիւնն ու հաստութիւնը մեծամեծ կաղնիներուն պէս է. բայց զարմանալին ան է որ ասոր ճիւղերը բաւական երկրննալէն ետքը՝ շիփ շիտակ դէպ 'ի գետնին երեսը կ'իջնան՝ երկայն բարակ չուանի պէս. ճիւղերուն ծայրը գետին կը խրի, և ուրիշ նոր բուն մըն ալ կը ձեւանայ. անիկայ գետնէն նոր անունդ առնելով՝ վերէն վար իջած ճիւղերը շուտով մը կ'աճին. ասով մէկ կողմանէ բուն ծառը միշտ հաստընալու և ընդարձակելու վրայ կ'ըլլայ, մէկ կողմանէ ալ անոր արմատէն հեռու նոր նոր արմատներ կը ձգեն իր ճիւղերն ու ետեւէ ետեւ կը շատնան: Ըսանկով մէկ ծառէն ինչուան ամբողջ պզտիկ անտառ մը կրնայ ձեւանալ. իսկ թէ որ ճիւղերը չկարուին, ու վրան աղէկ հոգ տարուի, ինչուան քաղքի չափ ընդարձակ տեղ կրնայ գոցել. ինչպէս՝ Պենկալայի մէջ եղած պանիանը որ 370 ոտնաչափ դէպ 'ի չորս դին կը տարածուի եղեր. ուրիշ մըն ալ կայ որ 1700 քառակուսի կանգուն տեղ կը գոցէ կ'ըսեն:

Սովորաբար պանիանը տուններու, կռատուններու և ուրիշ հրապարակական տեղերուն բոլորտիքը կը տնկուի: Ըս սքանչելի ծառին փայտը շէնքի ու

հիւսնութեան ամենեւին չյարմարիր. պտուղը քիչ է, ու հասունցածին գոյնը կարմիր կ'ըլլայ, և ագռաւներն ու ուրիշ թռչունները կ'ուտեն:

Հնդկաստանի մէջ պանիան մը կայ, որ խիստ անուանի է իրեն հնութենն ու մեծութեանը կողմանէ, անանկ որ հնդկաստանցիք ուրիշ տաճարներէն հոն կ'երթան ուխտի, և իրենց տօնախմբութիւնները անոր տակ կը կը կատարեն: Ըս ծառին բունած տեղին տարածութիւնը 2000 ոտնաչափ է, ու ամէն մէկ բունը աս կողմի կաղնիներէն հաստ է. իսկ պզտիկ բունները 3000էն աւելի են: Հին ատենը աս ծառը շատ աւելի ընդարձակ է եղեր. բայց Սերպուտա գետը ասոր քովէն անցնելով՝ կամաց կամաց մէկ մասը առեր տարեր է:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Սանր արդոյ մարմնոյն վրայ ընելու խնամքեր:

ՓՈՐՁՈՎ տեսնուած է որ տղոց առողջ և ուժով կամ տկար ու հիւանդոտ ըլլալը՝ իրենց մարմնոյն գէշ կամ աղէկ դաստիարակութենէն կը կախուի: Տկար ու հիւանդոտ մարդիկ մարդկային ընկերութեան անօգտակար, և իրենք իրենց ծանրութիւնն վասն զի այնպիսիներուն նաև մտաւոր ու բարոյական կարողութիւնները տկար կ'ըլլան: Ուստի խիստ հարկաւոր է որ տղոց մարմնոյն դաստիարակութեանը վրայ մեծ հոգ ու խնամք ընեն ծնողք:

Տղոց մարմնոյն կըթուլեան դէմ եղած սովորական սխալմունքներուն գլխաւորները ասոնք են.

Ա. Տղաքը չորս տարուրէն առաջ մսեղէն կերակուրներով կը մեծցընեն, որ շատ դժուարամարս են, և կամ չաքարեղէն կերցընելով՝ զանոնք չափէն աւելի կը տաքցընեն, ու ետքը պարզ